Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 43

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը, Ա. Խաչատրյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ա. Սարգսյանը, Ն. Պետրոսյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար Շ. Վահանյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
5. Աշտարակ համայնքի ավագանու 07.09.2017թ. N 12-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
6. Աշտարակ համայնքի սանիտարական մաքրման ու աղբահանության իրականացման կարգերը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
7. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

11. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

12. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

13. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

14. Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի վերաբերյալ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը հաստատելու և հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

15. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

16. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

17. Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս մնացած գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար Շանթ Վահանյանը և առաջարկեց փոփոխություն կատարել Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում՝ վերաբաշխելով հաստատված ծախսային մասի հոդվածների միջև:

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը հնարավորություն կտա կատարելու համայնքի կողմից ստանձնած պարտավորությունները:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին*

Հարցը զեկուցեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար Շանթ Վահանյանը և առաջարկեց ընդունել ի գիտություն Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը:

Զեկուցողին հարցեր ուղղեց և ելույթով հանդես եկավ Ս. Օվոյանը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Սարգսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները հիմնականում տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *Աշտարակ համայնքի ավագանու 07.09.2017թ. N 12-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց փոփոխություններ կատարել Աշտարակ համայնքի ավագանու 07.09.2017թ. N 12-Ա որոշման մեջ:

Զեկուցողը նշեց, որ կատարվող փոփոխության հիմնական նպատակը համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը նոր խմբագրությամբ ընդունելն է, ինչն իր հերթին հնարավորություն կտա առավել արագ և օրենքին համապատասխան իրականացնելու համայնքի առջև դրված խնդիրները:

Ս. Սահակյանին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - *Աշտարակ համայնքի սանիտարական մաքրման ու աղբահանության իրականացման կարգերը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի սանիտարական մաքրման ու աղբահանության իրականացման կարգերը:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագիծը բխում է տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից և նշված նախագծով փորձ է արվել համապարփակ լուծում տալ համայնքի սանիտարական մաքրման և աղբահանության իրականացմանը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Տ. Գալստյանը, Ա. Սարգսյանը, որոնց Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները:

Զեկուցողը նշեց, որ նշված կանոնների ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի պահանջներից:

Ս. Սահակյանին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց սահմանել Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:

Զեկուցողը նշեց, որ նշված կանոնների ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի պահանջներից:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, Աշտարակ համայնքի մի շարք հողամասեր ուղղակի վաճառքով օտարել կից ընդլայնվող հողամասի սեփականատերերին:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Պետրոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ

Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասերը մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով, միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը, Տ. Գալստյանը, որոնց Հ. Բաղդասարյանի և համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - Հողամասերի փոխանակություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց Աշտարակ քաղաքի <<Վառոյի ձորակ>> թաղամասում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0233-0029/ Գևորգ Կայծակի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 600քմ տնամերձ հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող <<Վառոյի ձորակ>> 2-րդ թաղամաս, N46/1 հասցեում գտնվող 600քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի հետ:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով սեփականատեր հանդիսացող քաղաքացիների դիմումները, հավանություն տալ ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ Արայի տեղամասի 02-001-0135-0090 ծածկագրով, Արթուր Ռաֆիկի Ղազարյանին

սեփականության իրավունքով պատկանող 1,5հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,06հա մակերեսով վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - *Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի վերաբերյալ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը հաստատելու և հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հիմք ընդունելով ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը՝ հաստատել Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխությունը և 02-001-0673-0007 ծածկագրով 0,1074հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0.0496հա մակերեսով վարելահողի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամաս՝ բնակելի տուն կառուցելու համար:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 15 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Միաժամանակ առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 16 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 17 - Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս մնացած գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համայնքի վարչական տարածքում գտնվող 694-039 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասից 0,0784հա արոտավայրը ճանաչել համայնքային սեփականություն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2021 թվականի մայիսի 27-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ	**ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	**ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ